

ԲՆԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՌԱՐՍՆ*

(Շար. տես էջ 69)

ԱՋԳՈՐ կամ ԱՍԿՈՒԻԵԹ. Վ. ԱՏԺԱՆԵՐԻ. Թ. ۱۸۶۱. Թ. Аук. рн. — Վաղեմի բերդա-
քաղաք Տայոց Հին Աղորդ գաւառի, այժմ
գլխաւոր քաղաք կամ լուս եւս աւան համ-
անուն վիճակին. Կ'ինկնայ Ախալցխայի
Հիւսիսային արեւելեան կողմը, ՉՈ վերստ
հեռաւորութեամբ: Կառուցուած է Կուր գե-
տոյն աջակողմը, բարձր և պաշտպանու-
թեան յարմար և միանգամայն գեղեցիկ վեր-
քով: Նշանաւոր է ժայռի վրայ կառուցուած
ամուր բերդը, որ զանազան ժամանակաց
մէջ, շատ անգամ զինադատ է թշնամեաց
ուժերուն. տակաւին կը տեսնուին ատաճա-
նեւ վերջացած պարիսպքն, Հին շէնքերու
մնացորդներ, վրացերէն արձանագրութեանց
բեկորներ և Կետէն վեր ջուր տանելու հա-
մար քարուկեր ճամբայ մը: Բերդաքաղաքս
ոչ միայն օտար այլ և մեր պատմիչներէն
կը յիշուի Ժ դարու սկիզբը, Ասկուրէժ կամ
Սակուրէժ կոչմամբ. այն ժամանակները,
լոստ Յոհան կաթողիկոսի, հոս եկաւ ապա-
ւինելու մեր Բագրատունի քաջ թագաւորն
Աշոտ Երկաթ, իր Աբաս եղբորը և 250
կարիճներու հետ, և յարձակելով թշնամեաց
վրայ, հալածեց և կորակոր ետ զարձուց եր-
կու գաւառան Գնունի եղբարը և 4000 մարդ:
Նոյն դարու վերջերը Տայոց Դաւիթ կիրա-
պաղատը, այս քաղաքս Ափխազաց Բագարատ
թագաւորէն առնելով, ընծայեց մեր Սմբատ
Տիեզերակալ թագաւորին, ի փոխարէն իրեն
ըրած օգնութեան:

Շատ անուանի է տեղւոյս Տիրամօր ուխ-
տատեղին. ըստ աւանդութեան Վրաց, Ան-
դրէաս Առաքեալը հոս բերած է Ս. Աստուա-

ծածնի պատկեր մը, և հրաշքներ ու բժշկու-
թիւններ ընելով՝ տեղւոյս կոտաւունը կոր-
ծաներ, և եկեղեցի մը շինելով, պատկերը
հոն դրեր է: Կ'ըսեն նաեւ թէ, մինչեւ Հե-
րակլ կայսրն իսկ, ուխտի գալով հոս, և
քակելով հիմ եկեղեցին (Վր. Ծրագէ-էլիշխիա)
նոր, մեծ և փառաւոր եկեղեցի մը շիներ է,
որ և ժամանակ մը Վրաստանի Սամցխէ
Գաւառի երկոտասան եպիսկոպոսանիստ ա-
թոռներէն մին էր: Եկեղեցիս երեքտասանե-
րորդ դարու վերջերը՝ մեծ երկրաշարժէ մը
կործանուելով, կ'ըսեն, գմբէթն իջեր և հո-
վանիի պէս ծածկեր է սուրբ պատկերը:
Վերստին կանգնիր են եկեղեցին և շատ ան-
գամնեւ տեղւոյս իշխողը՝ ծանր ծանր ցնով ուխ-
տական և հրաշագործ պատկերս գերութենէ
կամ գողութենէ վարձուցեր են իր տեղը,
մինչեւ ԺՋ դարու վերջը: Յետոյ այլազգեաց
ձեռքը անցնելով քաղաքս, եկեղեցին կոր-
ծանուեր է, պատկերն ալ այժմ կը գտնուի
Կելաթի վանքին մէջ: Կիսակործան եկեղեց-
ւոյս աւերակաց վրայ կը տեսնուին ճարտա-
րապետութեան և նկարչութեան գեղեցիկ
նշաններ. բայց արձանագրութեանց ամե-
նեւին հետք մը չկայ: Պրոսէ՝ քաղաքս այց-
ելած ժամանակ, տեսած է եկեղեցւոյս քա-
բերէն ցիր և ցան գործածուած շատ տներու
պատերուն մէջ:

Վրաց Հերակլ թագաւորը 1770ին Ռու-
սաց նիզակակցութեամբ յաղթեց Թրքաց՝
քաղաքիս պարսպաց տակ: 1828ին երբ
Ռուսը Ախալցխայի տիրեցին, Ազդերն ալ իր
շրջակայքով անոր վիճակներէն մին եղաւ:
Ղրիմու պատերազմի ժամանակ, ահաւոր
պատերազմի տեսարան մը բացուած էր նաեւ
հոս. օսմանեան բանակն յարձակելով Ռու-
սաց վրայ, Կիսրովացաւ զինադրել և շատ
կորուստով յաղթուած ետ դարձաւ: Այժմ
(1883) բերդաքաղաքիս հայ բնակիչը, որոց
թիւն է 805 հոգի, կը գրադին վաճառակա-
նութեամբ. միւս բնակիչը Վրացի են 1272
հոգի: Բոլոր Ազդերի վիճակի մէջ գտնուած

* Տեղւոյ սղութեան պատճառաւ հարկա-
դրուեցանք այս անգամ չհրատարակել հան-
դիսիս մէջ, ոչ միայն անշնան, այլ և շատ նշա-

նաւոր անուններ, որոնք անպատճառ կը մըտ-
նեն առանձին պատկերազարդ թերթերու մէջ:

Հայոց թիւն է 1818 հոգի, բաժնուած 178 տան: Իսկ ընդհանուր Հայ, Վրացի, Թուրք, և արիշ ազգաց թիւն՝ կը հասնի 14,303 հոգւոյ, բաժնուած 1709 տան: — Նշմարք Հայկ. Ա. Պր. 13—4, Ստ. Հ. Հայ. 336—7. Չամէլեան Պատմ. հտ. Բ. 870: Ս. Մարքէն, հտ. Ա. 84: Պրոսէ, Բ. Պր. 117—18. *Le Tour du Monde*, XLVII, 404. ԱԼԱՅԱ. ՆՆ. ԿՈՒԱԿԵՍՈՒՄՆ. ԳԳ. АЛАЯ, Թ. Լ. Վ, Լ. Խ. CORACESIUM, ՅՆ. ΚΟΡΑΚΗΣΙΟΝ. — Երովայնի կիլիկիոյ գեղեցկագիր և ամուր քաղաքներէն զխաւսուն է սա, անուանի Հընուփեամբն, կառուցուած համանուն հրուան.

դանի վրայ: Հին պատմութեան մէջ ծանօթ է Կուռակեսիոն անուամբ: Պոֆորթ գեղեցիկ կերպով կը նկարագրէ քաղաքս, բնական ամրաց մը համարելով իւր անտիկ և պատըսպարեալ դրիւքը, որոյ բազմաթիւ կիսակործան աշտարակներն և պարիսպները ապացոյց են, թէ հին իշխեցողք ևս ջանացած են իրենց անմասշեկի ապաստանարան յարգարել զայն: Բարձրը, ընտան վրայ, հռչակաւոր Գիոյոր Տրիփոն ծովահինից պետը, կառուցանել տուած էր ամրաց մը, իւր աւարը և կողոպտուար հոն ապահովելու համար: Լեռան շուրջը տեղ տեղ գետ կը



Ա զ զ ր

նշմարուին Պոմպէոսէն կործանուած այգ ամբոցի մնացորդները:

Մեծին Լեռնի թագաւորութեան ժամանակ՝ Կալմուռուս անուամբ կը յիշուի բերդաքաղաքս, Սիր Ատանայ աշխարհի մէջ. Սիւ Ատանը կամ Ատումը Լեռնի Պայլն (խնամակոյ) էր անոր պայազատին, Չապէլ բամբռան: Սիր Ատանը գետ չվախճանած, իր թոռն կամ որդին Կիւր Վարդը գրած էր տէր Կայունասի, Լեռնի ու Սիր Ատանի մահէն վերջ, գետ Հեթումը արբայական գահը չբարձրացած, մինչ խռովութեան մէջ էր իշխանութիւնը, յարմար ժամանակ գտնելով իկոնիոսի նոր սուլտանն

Ալայէտտին, յափշտակեց զայն: Ահա հետեւել կերպով կը պատմէ մեզ Սմբատ պատմիչ. « Էստո (Ալայէտտին) յԱտումայ թոռնէն՝ ի Կիւր Վարդէն՝ գրեթէ Կալմուռուս, և զգուտոր ծորա ի կնութիւն՝ յոչ կամաց, և վասն քրիստոնէութեանն՝ չհանդես ի հետն՝ աղջիկն »: Ալայէտտինի բերդիս տօրեյն վերջ, իւր անուան առաջին երկու վանկերու հնչմամբ կոչուեր է Ալայս:

Թէ երբ սեփակեցութիւն դարձած է Հայոց բերդաքաղաքս, հանդերձ իր շրջակայ գաւառաւ, պատմութիւնն անստոյգ կը թուուի, ինչպէս նաև այս մասին տիրող Սիր Ատանայ ինչ ազդի վերաբերին: Եւրպացի

հայազէտներէն ոմանք թէև կը համարին որ բլլայ փռանկ հմե (Աղամ) խաշակու- թեամբ այս կողմերն եկած, բայց մեր կի- րակոս պատմէի վկայութենէն թէ՛ «եր Հո- ոսմ դաւանդաբանք» կը յայտնուի, որ ոչ լատին էր և ոչ յոյն, այլ նոյն ժամանակի յունածէս հայերէն։ Իւր Ատան անունն ալ ծագեալ է անշուշտ յունասէրներէն, զի ինչ- պէս վերը տեսանք, Սմբատ պատմիչ ուղիղ հայկական անուամբ զինքը կ'անուանէ Ատամ։

Ըստ կարծեաց ոմանց, հաւանական է որ Սիւր Ատամի նախնիք՝ Ատոմեանները, Ռուբինեաններէն առաջ տիրէին այս կող- մանց, հպտտակելով յոյն կայսերաց, ինչ- պէս էին նաև Ալլաղարիպեանք Տարսոնի մէջ։ Սենեքերիմ արծրունւոյ այն պայագատե- ըն էին անշուշտ Ատոմայ նախնիք, որք յետ Վասպուրականէն գաղթելու ի Սեբաս- տիա, ընդունեցան Յունաց դաւանութիւնը, և այս կողմերը գալով, փոխանակ իրենց սիրելի Վանին և Բզնունեաց ծովակի կա- պուտակ ալեաց՝ այս կարկառակոյտ գա- գաթներէն կը դիտէին համառարած Միջեր- կրակեանին ասպարէզը, և ինչպիսի մտա- ծովութեամբք։

Իսկն Պաղուդա արաբացի անուանի աշ- խարհագիր ուղեւորը, 1340ին ատենները այցելելով քաղաքիս, աշխարհչիս գեղեցկա- գոյն մասն կը համարի և բնակչաց հետե- լեալ ածականները կը յատկացընէ. կայ- տառ, գեղեցիկ, մաքրագոյնատ, բարեբարոյ, հիւրասէր, և այլն։ Կը յայտնէ թէ նոյն ժամանակ քաղաքիս գլխաւոր վաճառքի նիւթն էր փայտը, և թէ բազմաթիւ նաւեր կու գային աստ Ալեքսանդրիայէն, Գահիրէէն և յԱսորոց։ ԺԴ դարուն և անկէց առաջ ալ, Ալայայի նաւահանգիստը միշտ յաճախած են իտալացի վաճառականաց նաւեր, յորս նշանաւոր են Վենետիկցիք և Ճենովացիք, կու գային նաև Կապալանք և Մայոլիկացիք Սպանիոյ, և Լոմպարտացիք։ Չանագան իտա- լական անուամբք կուլուած է բերդաքաղաքս և իւր մերձակայ վայրերէն ոմանք մինչև ԺԵ դար, և անշուշտ առ ժամանակ մի տի- րած են սոքա այս կողմերուն իտալացիք իրենց բոլոր ուժը թափեցին 1471—3ին

միջոց, ուղեւոր գրաւել ծովային Կիլիկիան, և Գարսամանցիները զօրացընել բնդէմ Օս- մանեանց, բայց երբ վերջինքս Պարսից յաղ- լեցին, այն ժամանակ ետ քաշուեցան։ Կէ- տիկ—Աճմէտ փաշան (1471ին) եկաւ քա- ղաքիս վրայ, Իկոնիոնի սուլտանաց պոյա- զան Գլըն—Արսլանը, որ կ'իշխէր քաղաքին, անձնատուր բլլալով, տարուեցաւ Օսմանեանց սուլտանին։ Նոյն ժամանակ զերի տարուե- ցան ի Կ. Պօլսի նաև Կիպրոսի Յակոբ թագաւորէն, քաղաքին պաշտպանութեան հա- մար զրկուած երեք հարիւր բաղիստրաւոր- ները։

Ինչպէս ըսինք քաղաքիս զիրքը սքանչելի է և նկարչական, տները նորօրինակ զրիւք իրարմէ վեր կը բարձրանան մինչև ցարա- ժայոի դագաթը, ծովու երեսէն բարձր 117 մետր, լիպոի ստորոտը, ծովու եզերքը, կայ բաւական մեծկակ այր մը, աւանդութիւնը կ'ըսէ թէ այդ այրի մէջ Կիլիկեան ծովա- հէնք, կը պահէին իրենց գանձը, և նոյն տեղը դրամ ես կը հատանէին. զննութեան կարօտ այս այրը կարելի է մտնել նաւա- կով մը։ Անամուրի կողմը նայող ժայռի վը- րայ, կայ երեսուն տարի, որ յայտնութեան Աւ- տրղիան մեհենի մը մնացորդները ի ձեռն Աւ- տրիացի հնարիւս Մորովօքի կոմսին, որ նոյն աստուածուհւոյն արձան մը, զաղտագողի նոյն տեղէն փոխադրած է ի Վիեննա։

Քաղաքս որ այժմ մերձաւորապէս ունի 5000 բնակիչք թուրք և յոյն, երթալով կ'ընդարձակի և կը տարածուի դէպ ի հարաւ դաշտի մէջ, ուր կան գեղեցիկ և մեծ պար- տէշներ, դարպարուած՝ նարնջի, կիտրոնի և արմաւի ծառերով և այգիներով։ Շինուածոց մէջ չկայ նշանաւոր ինչ, փողոցներն նեղ են և ծուռամուռ։ Ալայա գուրի է ըմպելի ջրոյ աղբիւրներէ, ուստի թէ՛ խմելու և թէ՛ այլ պիտոյից համար կը գործածեն ջրամբար- ներու ջուր։ Թուրքերն ունին 32 մզկիթ մեծ և փոքր և 10 դպրոց 250 աշակեր- տօք. իսկ Յոյնք 5 եկեղեցի և 2 դպրոց 100 աշակերտօք։ Նաւահանգստի մօտ կայ լայնակող ութանիկնի աշտարակ մը Գլըն- գոչի անուամբ, 80 մետր տրամագծով և 30 մետր բարձրութեամբ, փաղաքիս նա,

աւանդդիտար բաւական բանուկ է. Անդդիոյ, Աւարտա—Հոնգարիոյ, Յունաց եւ Օմանեանց վաճառքի նաւեր կը յաճախեն աստ. տար. ադն մէջ միջին հաշուով կը մտնեն 126 շոգենաւ եւ 565 առաքատանաւ:

ԱԼԼԵՇԿԵՐՏ. Գղ. ALACHGUERD. Թ. ۵۰۰۰۰۰. Թ. Алашкеръ, — Հին վաղարշակերտ բերդաքաղաքի անուան աղաւաղութիւնն է, որ Ալլարատայ Բաղրիւանդ (Պայազդա) գաւառի այժմեան վիճակներէն մին կը կազմէ. սահմանն են Ար.էն Գարա—Քիլիսէ եւ Տիաւին, Արմ.էն Կարնոյ գաւառը, Հր.էն Անթապ եւ Հս.էն Շահկոյ լեռներ կամ Ռուսաց սահմանը: Վիճակս ունի ընդարձակ, բերրի եւ ջրաբրի դաշտ մը. գլխաւոր բերքերն են ցորեան, գարի, կտաւատ, կորեկ, եւ զանազան տեսակ բանջարեղէններ: Երկիրը առատ խոտ ունենալուն, կը սնուցանեն գոմշեղէն, ոչխար, այծ, եզ, կով. բայց տրոց խիտ ծանրութեան պատճառաւ, ժողովուրդը միշտ աղքատութեան մէջ կը մնայ: Ըստ այժմեան բաժանման ունի 115 գիւղ, 2,637 տուն եւ 20,111 բնակիչ, հետեւեալ կերպով բաժնուած.

Մահմետականք	13,873	հօգի:
Հայք	3,207	»
Հայ-կաթոլիկք	2,734	»
Հայ-բողոքականք	99	»
Այլեւայլք	178	»

Գումարն 20,111 հօգի:

Ամրոշ վիճակին մէջ կան 10 նախակրթական վարժարաններ, յորոց չորսը կը վերաբերին Հայոց:

Ալաշկերտ անունը շատ անգամ պատմիչներէն յատկացուած է ամբողջ Բագրեւանդ գաւառին, որ այժմ բաժնուած է չորս վիճակներու: Այժմ վիճակիս զխաւոր աւանն կը կոչուի Թսփրիսա—Վալէ (Հոդաբերդ), որ եւ աւելի ճշգրտեամբ կը կոչուի նաեւ Ալաշկերտ: Սա կը համարուի բուն Հին վաղարշակերտը կամ վալաշկերտը, զոր կառուցած է Բ զարու վերջերը, Արտաշէն Բի որին, վաղարշ Արշակունի թագաւորը: Դիրքն բարձր է գրեթէ 5950 ոտք, համանուն գաշտի Հիսիոսային եղբն դէպ ի Շահկոյ

բարձրանալու սկսած վայրը: Արեւմտեան կողմը տարածուած գաշտն եւ շուրջը պատած լեռնաշղթայք, մէկ հայեացքով քաղաքաւանէն գիտողի աչաց հրապուրիչ տեսարան մը կը ներկայացընեն: Ս. Սուքիասանց վարդապետաց՝ Սրբոց Ռսկեանց, Հին վալաքաւու թեան մէջ կը յիշուի աւանս հետեւեալ կերպով. «Ի տեղին շինեալ աւանս սեճ ի թաղաւորէն վաղարշայ, անդ գորդի իւր բնակեցուցանէր, սակա տեղւոյն բարեխառնութեան, վաղարշակերտ յանուն իւր կոչեցեալ»: Անտարակոյս, թագաւորաշէն աւանս թէ զեղեցիկ դրեւը եւ թէ հանդէսներովը կը մրցէր Բագաւանայ հետ: Ս. Սուքիասանց ճգնութեան եւ նահատակութեան սրբանուէր վայրաց մօտ ըլլալով, մեծապէս պաշտառցաւ Ս. Գրիգորի եւ Տրդատայ ժամանակ: Երթներորդ դարու կիսուն Ներսէս Շինող կաթողիկոսը, իբրեւ ուխտական երեւելի վայրերէն մին, աստ շինել տուաւ հոյակապ եկեղեցի մը Ս. Աստուածածնի նուիրելով: Ճաններորդ դարու սկիզբը քաղաքս Բագրատունի թագաւորաց ձեռքն էր. նոյն ժամանակները զուր տեղը պաշարուելով Ռուսոփ ոստիկանէն եւ վասպուրականի Գաղիկ Արծրունի թագաւորէն, քնակչաց անվեհեր քաղաքումը, օտրպուցեան թշնամիք մեծ աւանով վաղարշաւոր վերցընել: Գրեթէ միշտ երազաւոր ժամանակի զանազան շրջանաց մէջ, հետ զհետէ ինչպէս քաղաքս, նոյնպէս եւ գաւառս, յետ իւր սեփական տեսարց ձեռաց յափշտակուելու, դարձած է տիրապետութիւն օտար իշխողաց, որոց այժմեան յաջորդք կը համարուին, այս կողմերը ցրուած քուրդ ազգաբնակութիւնք: Տեղւոյս օղոյ բարեխառնութիւնն, թէ եւ շատ կը դուրս, սակայն բոլորովին զերծ մնացած չէ Ալաշկերտը մահաւորաժամի անգուլթ ճիւղաններէն: Այս նկատմամբ Ս. Թաթլոյ կենսագիրը կը պատմէ հետեւեալը, որ հանդիպած է Զուր դարու վերջերը. «Ի վաղարշակերտ քաղաք մահաւորաժամ սաստկացաւ, եւ մեծ տագնապ պատուհասի հասոյց, զի արագ սպանանէր, քան զմի օր եւ զերկուս ոչ ներք ալլ աւելի. եւ պատճառ մահուան այս էր, խաղաւարս փոքրիկ նման խաղաղոյ ծիրանաւ,

գոյն»։ Կը շարունակէ խօսքը ըսելով, թէ՛ այս հիւանդութեանն ազատուելու համար ուրիշ միջոց չգտան, բայց եթէ ուխտի երթալով Ս. Թաթլոյ և Վարդան գերեզմանաց և ամբողջ գիշերը հսկումն և ջերմամաղդուկներն ընկելով։ Այժմ հին վաղարշակերտի շքեղութիւնն և փարթամութիւնն, բաց ի բնական զերբէն, բոլորովին ոչնչացած են, և միայն ողբալի ու տխուր աւերակաց կոյտեր մնացած են աստ և անդ ցիր և ցան։ Քաղաքաւանն բաղկացած է հազիւ 700 տներէ, յորոց 150ը միայն հայ են, մնացեալը մեծաւ մասամբ քուրդ։ 150 տան չափ ալ՝ 1877ին պատերազմէն վերջը կարսէն, կաղազուանն և Պայազուին գաղտնիք թուրքերու իւր հիւսիս արեւմտեան կողմը բարձրացած կրէ և կրաքարէ կազմուած բլրան զազաթը, կը տեսնուին հինաւուրց պարիսպը, հիւսուած՝ որձաքարով և կրով։ Քսան տարի առաջ, պարոպի շուրջը կային մեծաւ մասամբ կանգուն տառնի չափ աշտարակներ, զորս 15—20 տարիներէ ի վեր կը բանդեն այլազգիք, բարերը վար գլորելով, նոր շինութեանց զործածելու համար։ Այդ քաղաքներէն յայտնուեցան այլեւայլ գաղաղի ներքնուղիներ, որք հաղորդակցութիւն ունէին բերդի դանազան մասանց հետ։ Բերդս ունի կրկին մուտք, մին արեւելեան կողմը, գոլարազնաց ճանապարհով մը, հետեւակաց համար. երկրորդն արեւմտեան կողմը, որուն ճանապարհը բաւական հանգիստ է և սայլեր ալ կրնան երթալ։ Պարոպի ներքին կողմը կայ սալաշատակ ձուածն տափարակ մը և կիսաւեր սրմբու մնացորդը։ 1860—70 թուականնէն, բուն, բաց էր բերդիս զլիւստը ներքնուղին, և մէջը ճրագով մտնելով, բաւական տեղ ալ ալ կ'երթային. ներք տեսած են կարծր ժայռի վրայ կոփուած սանդուխներ։ Վերջին քանդմանց ժամանակ, քննութեան կարօտ այդ ներքնուղոյ բերանը, բոլորովին զոցուած է աւերակաց թկոյրներով։ Դարուս սկիզբները (1820—25), աակաւին շէն էր այս բերդը. այժմեան բէկերու նախնիք՝ ունէին հոս պալատ, բնտ, դատատանարան, կախարան, դահճատուն, ձիանոց, պահականոց, և այլն։ Ալաշկերտի այժմեան շուկայէն բաւական

բարձր, բերդի հարաւային ստորոտը կ'երեւին հին շուկայի հնաքերը, որ ըստ աւանդութեան՝ 4,500 կրպակ կը պարունակէր. այդ աւերակաց միջէն վերջին տարիներս գտնուած են արծաթէ դրամներ։ Նոր շուկան՝ որ հինէն զբնթէ 1 հազարամետր վար և նոյնչափ ալ դաշտի եզրերէն զէպ ի վեր, արեւելեան հարաւ հակեալ զերբէ մը վրայ կ'իյնայ, ձեւացած է երկու փողոցներու վրայ շարուած, մէկ դռնով նեղ և մով 100 կրպակներէ։ Աւանս կանոնաւոր շէնքեր չունի, հազիւ միւրեքս շինած են քանի մը բաւական ձեւաւոր կրպակներ. կան նաեւ ոչինչ թուով սրբաւոր ճարով կառուցուած շէնքեր, որոց բարերը կամ շատ հեռուն բերած են և կամ բերդի, գերեզմանատան, հին վանքի և այլ աւերակներէ հանած. վասն զի աստ քարահանք չի գտնուիր և եղածներն ալ խիստ փխրուն են։ Կարսէն կը բերեն հոս ոգելոց ըմպելիքներ, իսկ թարթրողէն՝ ընտիր կարմիր գինի և օղի. բայց տեղւոյս օղին լաւագոյն է, կը պատրաստեն չամչէ։ Կտաւեղէնք ընդհանրապէս Բաղէշէն կը բերեն, ինչպէս նաեւ խաղող, չամիչ, կաղին, ընկույզ, պատտեղ, տանձ, խնձոր և պտուական նուր։ Աստ տարուան մէջ միջին հաշուով առուորդ կ'ընեն.

Կտաւաժահաւք	5,000	օսմ.	սկիւն
Մանրավահաւք	1,000	»	»
Գինեղահաւք	4,000	»	»
Մխավահաւք	2,000	»	»
Նպարավահաւք	1,000	»	»
Համագումարն	10,000	օսմ.	սկիւն

1879—90 թուականներուն տեղւոյս վաճառականութիւնն բոլորովին Հայոց ձեռքն էր, իսկ այժմ խիստ ինկած վիճակի մէջ է։ Տեղւոյս աւերակները, ջրմուկները, քուրջաց աւանդութիւնն և այլ հանգամանքներ կը հաստատեն, թէ սա է բուն հին վաղարշակերտը. աւերակաց հնաքերէն կը մտկաբերուի որ ժամանակաւ մաստաւորապէս 10,000 տուն եղած բլրայ այստեղ։ Բերդէն կէս ժամ հեռու զէպ ի արեւելեան հիւսիս և յարեւմուտ, մինչեւ խառնով աղբիւրի մօտ, կը նշմարուին հիւսիսեանց մնացորդներ, և աղբ

բիւրի մօտ թէյ մը բարձր կան մեծ շինու-
թեանց աւերակներ Արքայապետ անուամբ, որ
բոստ աւանդութեան, հին ժամանակ քաղա-
քաւանի ամբարանոցն եղած է:

Ալաշկերտի աւերակ և շէն թաղորայք են.
Պէշման, Ստրանցոց, Փեթակձոց, Դարաշի,
Տարաղաձի, Թաւտոս Եսախանգեր, Ճրա-
քաձեր, Շենքուս կամ Գեօտի, Ջրայի, Տոք-
ներոս, Բերդի տիւ, Միւրանի, և այլն: Ա-
ւանիս եկեղեցին թէւ ըստ հնոյն կը կոչուի
Ս. Աստուածածնի անուամբ, բայց խիստ
խեղճ դրից մէջ կը գտնուի. երկար ժամա-
նակի ընթացից մէջ կ'երեւի հինն բոլորո-
վին աւերակ դառնալով, ի յետոց շինուեր
է ներկայն, որ հազիւ 100 տարուան հնու-
թիւն ունի, փայտեայ ծածրով, նոյնպէս տա-
սուերկու փայտեայ սեանց վրայ, փլելու եր-
կիւղէն մարդ չի համարձակիր ներս մտնե-
լու: Կը պատմեն թէ քանի մը անգամ այ-
րած է. Փասկելիչի պատերազմի ժամանակ,
թուրքերը մէջը ռազմամթերք և թուղանթեր
գետեղած էին. վերջին անգամ 1889 թուին,
բամազանի զինքն ճրկելով զարձալ հրդե-
հեցին և մաս մ'ալ այրեցաւ: Եկեղեցիէն
20 վայրկեան հեռու դէպ ի արեւելեան հիւ-
սիս, կը գտնուի գերեզմանատունը. այս
երկրի մէջ մղուած անընդհատ պատերազմ-
ներն, փնտս հասոցեցած են նոյն իսկ աւանիս
գերեզմանատան. ի բաց տարուած են շէ-
նութեանց համար հին և ընտիր տապանա-
քարերը, իսկ մնացածներն անշնչն են: Գե-
րեզմանատունը միջէն անցնող ճանապարհի
վրայ, հին եկեղեցւոյ մը հիման քարերը կ'ե-
լուն. կ'ըսուի թէ՛ այդ ըլլայ հոչակաւոր և
հրաշագործ Ս. Կիրակոսի վանքը: Այս եկե-
ղեցւոյ հարաւակողմը կայ առատաբողիս սառ-
ջրոյ պտտական աղբիւր մը. ըստ անգամ
ամբան՝ այս աղբիւրէն էջերով շուր կը տա-
նին յաւանն, համարձեման և զարնան կի-
րակի ու անիւ օրեր ժողովրդեան համար
զբոսաւայր մը դարձած է այստեղ: Աղբիւ-
րէս թէյ մը վեր կը գտնուի քարակոյտ մը
որ կոչի խանուսի նշխարաց տեղն է. 1730
— 35 թուականներուն մէջ այս կողմերը ա-
տանելի չարչարանօք նահատակուած է ե-
րանուհին կոչի խանուս, որոյ վրայ Բագ-

մալիպի 1859 տարւոյ հատորի 70 իջին
մէջ՝ տաղ մը հրատարակուած է. «Տաղ ի
վկայուհի Ս. խանուս՝ նահատակ ի Թոփրագ-
զալ» վերնագրով:

Քաղաքաւանիս հիւսիս արեւմտեան կողմը,
ամենէն բարձր գիւղի վրայ շինուած է քրդե-
րու աղօթատունը, որոյ դրան վրայ կայ ընդ-
արձակ յիշատակարան արարական տառե-
րով: Գրեթէ 160 տարուան այս շէնքը, կա-
ռուցուած է սրբատաշ քարերով և լաւ ճա-
շակով: Այդ քարերը բերուած են մաս մը
Ալիզանայ վանքէն, մաս մ'ալ Ջլաթիկայ
Ս. Լուսաւորի վանքէն և գերեզմանատներէ,
ախսոս օր հայկական հին յիշատակարանը
բոլորն ալ սրբած են կամ որմի մէջ հիւսած:


Տեղւոյս հին և բազմամարդ վաղարշա-
կերտը լինելուն ապացոյց են նաեւ հնու-
սաբերէ մեծ և կարծր փոքրակներով բազ-
մաթիւ աղբիւրներու քաղաքը բերելը. այդ
աղբիւրներու զիւաւորն կը համարուի Շահկէօլ
կամ ըստ օմանց Շահկէօլ լեռանց աղբիւրն.
միւսներն են Ալվազ աղի, Գերեզմաներոս,
Ճմաձի, Սեղընքարի, Խաղլան ձորի, Ամուս
Հանոյի, Շոսիի, Բաշոյի, Կաւնոյի, Փաշի,
Պախիքներոս և խանուսի աղբիւրներ: Այս
աղբիւրներէն շատերն այժմ անգործածելի
են, և գործածելիներէն շատերն ալ աւանէն
հեռու: 1750ին տեղւոյս կառավարութիւնն
աշխատած է Շահկէօլի աղբիւրի ճովէն ուրիշ
նոր ջրուղի մը շինել՝ աւանը ջուր բերելու
համար, բայց չէ յաջողած: Քրդերը այդ
հին աղբիւրներու ագուզաները գետնի տա-
կէն հանելով և աւանս բերելով, ոչինչ գնով
կը վաճառեն և քնոյներն ալ իրեւ ջրորդան
կը գործածեն տանիքներու վրայ: — Ճգնա-
ւորի տեղ կը կոչուի Ալաշկերտէն մէկ հա-
զարամարդ հեռու արեւմտեան կողմը, Ճայրի
մէջ փորուած աղօթատեղի մը, որ քաղաքի
ձեւ ունի. իսկ Ս. Սալգուի անուամբ ուս-
տառեղի մ'ալ կայ բերդի արեւմտեան հա-
րան, որուն համար աւանդութիւնը կ'ըսէ
թէ՛ ժամանակաւ բերդս պաշարուելով բռնա-
ւոր լծաւարէ մը, Սարգիս անուամբ զօ-
րավար մը յանձնուած է թաքաւորին, որ
միջի ժողովուրդը ազատուի: Բայց երբ թա-
գաւորն չարաչար կը տանջէ զՍարգիս, բեր-

դի ժողովուրդն այս տեսնելով, կը սկսին ուժով դիմադրել և զինամիտ ժամել: Կ'ըսեն հասել թէ Ս. Սուրբասանց ընկերներէն եղած է Սարգիս, որ իր ընկերացի Սուլաւէտ նաւահատկութեամբ ժաման, խոյս տուած է արաւուտներու վրայ հասնելով, սպաննած է այստեղ:

Ալաշկերտի ձեռագրաց մէջ, իրեւ նաւատոր կը յիշուի հին կարմիր Անտարտան մը, որ կոչուի հասել «Գաւթի ասն Անտարան»: զրուած է մագաղաթի վրայ, զայն տեսնողն չէ կտորողացած օրինակել հին յիշատակարանը. ունի արծաթապատ կողեր և զարդարուած է պատկերներով: — Այրարատ, 535—6. Բարբեռն, 46—74: Չափեան Պոմ. հտ. 752—3. Ս. Մարտին, հտ. Ա. 124—6: Ստ. Հ. Հայ. 405—6: Աստղիկ, Գ. Կ. և Գ. 19: Լաստիկ. Գ. Յոհան. կար. Խէ: Ասարել, էր 35 և 52: Ն. Հայ. 116—19: Պոսկ. Ն. Հայ. 47: Տեղգր. Հայս. 221—22: Վ. Քիսէ, հտ. Ա. 237—38:

2. ՍՈՒԹԻԱՍ ԷՓՐԻՍԵԱՆ

Շարայարելի



ԱՐԲԱՆԱՍ ՄԱՄԻԿ. ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԱՌ ՎԱՅԱԳԱՆ ԳՐԱՄ ԹՈՒՂԹՆ

ԵՒ ԱՆՈՐ ՆԵԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

ՍՈՒՐԱՆԱՅ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԱՆ

ԵՒ Մ. ԽՈՐԵՆԱՅՈՒՆ ՊԱՍՄՈՒԹԵԱՆ ՆԱԿԱՍՄԱՐ

ՍՍՍՍՍՍՍՍՍՍ ՆԱՆԻՆՈՒ մէջ եղած կրկին յայտարարութեանց համեմատ մինչդեռ կը պատկերէ Ա. Կարիշի: Մարտաւ Կարիշի մասին բրածնոր գիւտի հրատարակութեամբ տալիք վերջնական պատասխանուոյ մի, ահա յանդիման ասպարէզ ելաւ Նորայր Բիւզանդացի, որ հաստիւնով իւր լուսութեան հետ նաեւ հայ շերտագետի թիւ ու ղէմ գործներով բանակի, իւր մէջ զբոս հարուածով ուղեց կողով յաղթութեան դափնեպսակը, իբրու այն թէ այլը զեռ բան մ'ըրած չըլլային: Գուցէ շատեր տեսնելով նորա առած այս քայլը, յաջողութեան

իսկ կատարեալ համարեցան: Բայց որոնք գիտէին քաջ, թէ Նորայրուոյ պատմագրութեան ղէմ յարուցուած խնդիրներն ինչպիսի գոհաւարայն զգալովնակէտի իբրև անտեսողութիւն ժայռի մը վրայ՝ եկած յանգած են այսօր, շնորհիւ խառնապահանջ քննադատութեան, չէին տարակուսիր ընալ՝ որ ուշ կամ շուտ մեր քննադատն իսկ պիտի ոտնակառնէր այդ ժայռը: Եւ յիշուի: Մշակի 191, 193, 198, 206, 216 և 217 թիւերուն մէջ փոյթ ընդ փոյթ հրատարակած յօշուածներէն վերջ կեցաւ նա, երբ հարկը կը ստիպէր զինքը լուծել Խորհրդացւոյ պատմութեան Գ գրքի նի գլխու հանգոյցը. այսինքն է Ս. Նորայրայ ներդրումն որ նոյն է Ստրկատորսի վարաց մէջ՝ այդ հայրապետին յատկապէս ձեռնած ներդրումն հետ, և Գալուստ Տէր-Մկրտչեանի և Գր. Խաչատրեանի կարծիքով՝ և զարուս կատարուած անոր հայկական թարգմանութենէն փոխ առնուած է: Այսպիսի հաստահանեալ ժայռ մը փշրուելու և զոտարկանդի կացութենէն ազատուելու համար երկու միջոցներ՝ հարկաւոր էին Նորայրին: այս ինքն՝ կամ գտնել և ցոյց տալ ընդդիմանադրեց յիշեալ հաստահանեալ յոյն կամ առեր հնագոյն աղբիւրը, յորմէ կարող եղած լինէր օգտուիլ Մովսէս՝ Ե ցարում, և կամ ապացուցանել, ընդհակառակն, թէ այդ ներդրումն յետոյ ուրեմն անձնօթ ձեռքէ մի ներմուծուած է Նորայրուոյ պատմագրութեան յիշեալ գլխու մէջ: Սակայն Նորայր՝ իւր ձեռին ունեցած փաստերով գոհար է որ յաշուի յայտ: Մշակի 198 թիւին մէջ շուսփելով այդ ժայռը, նա կը յայտարարէր, թէ « Չայս պիտի ցուցանեմ յաշուրդն »: Բայց այդ յաշուրդներուն մէջ մենք զեռ ուրիշ բան չտեսնեմք՝ Բայց եթէ անոր Մեծ և Գրքը Սոկրատեսներու՝ Խորհրդացւոյ հետ եղած համեմատութեաններով զբաղին: Միայն այս էջերս գրելէն վերջը թանգարանը Մշակի 237 թիւին մէջ լոյս տեսած հաստահանեալ հետ, որ, — ինչպէս ենթադրած էինք, — Նորայր առանց վերոյիշեալ երկու միջոցներուն, և միայն խորհրդացւոյ բանական ինչ ինչ օտար բերութեանէն կ'եզրակացնէ, թէ Ն. Խորհրդացի ունեցած է Սեղեմատորսի վարուց յոյն բնագիր մի, և հաւանորէն զայն թարգմանած իսկ, հետեւաբար՝ և զարուս կատարուած հայ թարգմանութեանէն առած է: Սակայն յետ այնչափ երկանց ծնած այդ փաստը թերեւ խիստ քննադատեց այնքին սիւնի երեկ. քանի որ Նորայր ապացուցած չէ ուրիշ զրակայն փաստերով Ե ցարում ոչ այդ յաշուներէն բնագիրն և ոչ այլ անոր վրայէն Մովսէսի ձեռքով եղած հին թարգմանութեան գոյութիւնը: Մենք զեթ առաջին կէտը ամենա հաւանական ցոյց տուած էինք, Սեղեմատորսի վարուց հրատարակութեան ներմուծութեան մէջ, և որոց մասին Նորայր լուծած է իսպառ:

1. Այս օրինակէն զարգացան եւս համար կան ըստ իսկ արտաքին փաստեր. բայց առ այժմ կը լինի, մինչև որ Նորայր իւր վերջին խօսքն ըսէ: